# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 04 >> նոյեմբերի 2016թ. N 103

ք. Արմավիր

### ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, հիմք ընդունելով <<Գնումների աջակցման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության հրավերը, գնումների բողոքը քննող հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով.

**կ ա ր գ ա դ ր ու մ  ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին 2016 թվականի նոյեմբերի 4-ին գործուղել քաղաք Երևան՝ <<Գնումների աջակցման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից.

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ